ՀՈԴՎԱԾՆԵՐ СТАТЬИ

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՆ ԵՎ ՀԱՅ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԾԱՂԿՈՒՄԸ*

ԱՐՏ. ԿԱՐԻՆՅԱՆ

Քսուհասուն տարի առաջ, 1917 թվականի հոկտեմբերին, կալվածատիրական և կապիտալիստական լծից ազատագրվելու համար ժողովրդական մասսաների մղած պայքարն ավարտվեց պատմական մեծ հաղթանակով։ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան նոր դարագլուխ բացեց մարդկության պատմության մեջ։ Նա վերջ դրեց ամեն տեսակ սոցիալական ու ազգային ճնշումներին մեր երկրում և ռևոլյուցիոն պայքարի նոր թափ հաղորդեց աշխարհի բոլոր ճնշված ժողովուրդներին։

Հոկտեմբերյան ռևոլյուցիան իր արձագանքը գտավ նաև Հայաստանում։ Հայ աշխատավորական մասսաները ողջունեցին այն և նոր ուժով պայքարի ելան սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի համար։ Բաքվի և Անդրկովկասի մյուս արդյունաբերական կենտրոնների պրոլետարիատի պայքարը, Բաքվի հերոսական Կոմունայի կազմակերպումը ավելի խթանեցին ռևոլյուցիոն շարժման աճը Հայաստանում։ Հայտնի են աշխատավորների ռևոլյուցիոն պոռթկումներն ու ելույթները 1917—18 թթ., ասպատամրությունների հզոր ալիքը 1920 թվականի մայիսին, վերջապես, ռևոլյուցիոն մասսաների հաղթանակը և սովետական կարգերի հաստատումը Հայաստանում 1920 թվականի նոյեմբերի 29-ին։ Սկիզբ առավ հայ ժողովրդի տնտեսական կյանքի և մշակույթի իսկական ծաղկման ու վերածնության դարաշրջանը։

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան ջերմորեն ողջունեցին հայկական կուլտուրայի, գրականության և արվեստի առաջավոր ներկայացուցիչները։ Առաջին հայ գրողը Անդրկովկասում, որն իր ստեղծագործություններում արտացոլեց հայ ժողովրդի առաջադեմ խավերի վերաբերմունքը Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի լուսավոր պատգամների նկատմամբ, նշանավոր ժողովրդական բանաստեղծ Հակոբ Հակոբյանն էր։ Ռևոլյուցիոն աշխարհընդարձակ հագեցած նրա առույգ բանաստեղծությունները ուժգին արձագանքներ գտան հայ դեմոկրատական հասարակայնության շարքերում։ Ականավոր բանաստեղծի ըմբոստություն քարոզող երգերը դեռևս 1905 թվականի առաջին ժողովրդական ռևոլյուցիայի տարիներին ժողովրդին պայքարի և ակտիվ ելույթների էին կոչում։ Պոետի՝ զայրույթով ասդորված

---

* *Զեկուցում՝ կարդացված Հայկական, Ադրբեջանական և Վրացական Սովետական Սոցիալիստական ռեսպուբլիկաների Գիտությունների ակադեմիաների հոբելյանական միացյալ գիտական սեսիայում, նվիրված Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 40-ամյակին։*

բանաստեղծությունները Պետրոգրադի ռևոլյուցիոն ջոկատների հզոր ելույթների առաջին արձագանքները հանդիսացան։ Հայ դեմոկրատական հասարակայնության շարքերում ուժեղ արձագանք առաջացրին նաև Հակոբյանի՝ կսկիծով ու գայրույթով լի երգերը՝ նվիրված Բաքվի 26 կոմունարների հիշատակին։ Անհրաժեշտ է, սակայն, նշել, որ 1917—20 թթ. այդ գործերը Հակոբյանի կողմից ստեղծվել են ռևոլյուցիոն մարտերի անմիջական արենայից հեռու։

Մի փոքր այլ բնույթ են կրում հայ նախառևոլյուցիոն պոեզիայի տաղանդավոր ներկայացուցիչներից մեկի՝ Վահան Տերյանի արձագանքները Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիային։ Վահան Տերյանը հոկտեմբերի փոթորկալից օրերին ակտիվորեն մասնակցում էր ռևոլյուցիոն իրադարձություններին և կուլտուրլուսավորական նոր հիմնարկների կառուցման գործին։ Նա առաջին հայ բանաստեղծն էր, որ մարտական մկրտություն ստացավ ռևոլյուցիայի հնոցում՝ Պետրոգրադում և Մոսկվայում։ Գերմանիայի հետ բանակցություններ վարելու օրերին, Վահան Տերյանը Լենինի առաջարկով ուղարկվում է Բրեստ որպես խորհրդական։ Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի առաջնորդների հետ ունեցած հանդիպումները վճռական ներգործություն ունեցան արվեստի և գրականության նոր ուղիներ որոնող խոհուն բանաստեղծ-մտածողի աշխարհայացքի ձևավորման վրա։ Տակավին մինչև Հոկտեմբերյան ռևոլյուցիան Տերյանը, Ստ. Շահումյանի առաջարկով, գրում է «Ինչ է ասում Լենինը գյուղացիներին հողի մասին» աշխատությունը։ Սահմանադիր ժողովի ընտրությունների նախընտրական կամպանիայի օրերին պարտիական ղեկավար օրգանների որոշմամբ նրա անունը մացվում է Անդրիևվկաի բոլշևիկ թեկնածուների ցուցակի մեջ։ Տերյանը թարգմանել է Լենինի «Պետություն և ռևոլյուցիա» նշանավոր աշխատությունը։ Նա հիմնադրել է «Կոմունիստ» ամսագիրը, հայկական հրատարակչությունը, առաջին հայկական ռևոլյուցիոն թատրոնը Մոսկվայում, որոնք Սովետական Ռուսաստանի հայաշատ վայրերում մեծ դեր խաղացին։ Տերյանն անդադար նոր գեղարվեստական ձևեր էր որոնում, որպեսզի կարողանար իսկական հնչեղությամբ ճշգրիտ արտահայտություն տալ «համաշխարհային պատմության մեծագույն էպոպեային», ինչպես քանիցս նշել է ինքը։ Այդ շրջանում գրած նրա բանաստեղծություններում լսվում են ռևոլյուցիոն փոթորկի արձագանքները և արտահայտված է իր՝ բանաստեղծի վերաբերմունքը դեպի այդ պատմական իրադարձությունները։ Տերյանի նախաձեռնությամբ Թուրքեստանի տափաստաններում Բաքվի պրոլետարիատի ղեկավարների զոհվելու տխուր լուրը նշանավորվեց հատուկ գեկուցումներով ու դասախոսություններով՝ նվիրված Հոկտեմբերի գործի համար Բաքվում մղված պայքարի բնութագրմանը։ Այդ նույն օրերին Տերյանը գրեց կսկիծով լի իր այն բանաստեղծությունը, որը մինչև այսօր էլ մնում է հայ բանաստեղծների կողմից Շահումյանի հիշատակին ձոնված բաղմաթիվ ստեղծագործություններից ամենալավը։ Այդ աչքի ընկնող գեղարվեստական գործի գայրույթն ու վիշտը, հատու խոսքն ու հստակ միտքը, նրա ինքնատիպ կառուցվածքը բնորոշում են նաև կոմունիստ-բանաստեղծի կերպարը։ Հարկ է նշել և մի այլ նշանակալից փաստ։ Վահան Տերյանը եղել է և մնում է առաջինը հայ գրականության մեջ, որը չվախեցավ վշտալի երգի համար ընտրել անսովոր վերնագիր՝ «Գազել խնդության», ընտրել նոր «ձև» և ստեղծել բացառիկ ուժեղ մի երգ-պոեմ, նվիրված 1918 թ. Բաքվի Կոմունայի աչքի ընկնող ղեկավարի հիշատակին։

Երրորդ տաղանդավոր գրողը, որն իր ստեղծագործություններում արտացոլել է ժողովրդական մասսաների լուսավոր ձգտումները, Եղիշե Չարենցն էր, որը դեռևս Հայաստանում սովետական կարգերի հաստատումից առաջ ջերմորեն արձագանքեց Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի վեհապանծ էպոպեային։

Եղիշե Չարենցի անցած ստեղծագործական ուղին մեծ հետաքրքրություն է ներկայացնում հայ կուլտուրայի պատմությունը ուսումնասիրողի համար։ Միշտ չէ, որ հարթ է եղել նշանավոր ռևոլյուցիոներ-պոետի ուղին։ Չարենցի վաղ շրջանի ստեղծագործություններում կարելի է գտնել հայրենասիրական պոեզիայի արձագանքներ, նկատելի դիսոնանսներ և հակասություններ, տխուր երգեր՝ լի մտորումներով հարազատ ժողովրդի բախտի մասին։ Դաստիարակված լինելով հայ նախառևոլյուցիոն գրականության տրադիցիաներով, Չարենցը սկզբնական շրջանում գտնվում էր սիմվոլիստների ազդեցության ներքո։ Հետագայում նա Մոսկվայում ուսումնասիրում է Լեկոնտ դ'Լիլի, Սամենի, Բոդլերի, Վերլենի և ռուս սիմվոլիստների ստեղծագործությունները։ Նրա «Դանթեական առասպել»-ում ուրվագծված է պատանի հայրենասեր-բանաստեղծի կերպարանափոխման ուղին։ Չարենցի՝ Կարմիր Բանակի շարքերն ընդունվելը զուգադիպում է Կոմունիստական պարտիայի մեջ մտնելուն։ Մոսկվայում ապրելն ու սովորելը, աշխատավորների հետ շփվելը, մասնակցությունը ռևոլյուցիոն իրադարձություններին զինեցին բանաստեղծին մեծ դիտելիքներով և պայծառ աշխարհայացքով։ 1918 թ. հուլիսին արդեն, կարմիր բանակային Չարենցը գրեց «Ամբոխները խելագարված» պոեմը, որը պատկերում է ռևոլյուցիոն մասսաների հզոր շարքերով հմայված պոետ-տրիբունի մտորումները։

Այս պոեմի վրա նկատելի է և՛ Գորկու, և՛ Մայակովսկու ազդեցությունը։ Կարելի էր նշել նաև Վալերի Բրյուսովի ստեղծած յուրօրինակ գիտական խոհերի ազդեցությունը, այն խոհերի, որոնք ծնունդ էին ամենազոր բանականության և կապանքներից ազատագրված գիտության հանդեպ ունեցած ամուր համոզման։ Ժողովրդական մասսաների ուժը մեծարելով, Չարենցը գրում էր, որ նրանք՝ «եթե ուզեն՝ արևներին նոր տեմպ կտան ու նոր ուղի...»։ Այս պաթետիկ դարձվածքում նա արտահայտում է նաև ռևոլյուցիայի նոր պոետների մտորումները։ Ստեղծագործության ամբողջ կառուցվածքի ինքնատիպ բնույթը հաճախ է ընդգծվել Չարենցի քննադատների կողմից։ Այսօր, երբ պոետը նոր ու ավելի ճշգրիտ գնահատում է ստանում, չեն կարող մոռացության մատնվել նրա ֆանտաստիկ երազանքներն անդամ.

«Եթե ուզեն՝ արեգակներ կշպրտեն երկինքն ի վեր.
Եթե ուզեն՝ վար կբերեն երկինքներից արեգակներ...
Եթե ուզեն՝ կամքով արի ու աշխարհի հրով վառված,
Ինչե՞ր միայն չեն կատարի ամբոխները խելագարված...»։

Հետագայում, Հայաստանում ռևոլյուցիոն մասսաների հաղթանակից հետո Չարենցը գրում է վառ ստեղծագործություններ, որոնք նոր ուժով են բացահայտում դեպի հեռուները քայլող ռևոլյուցիոներ-պոետի դեմքը։ 1920 թվականի մարտին Չարենցը սկսում է աշխատել մի պոեմի վրա, որը պատկերում է դաժան անցյալը և հին ու նոր աշխարհի կերպարները։ 1921 թվականին ավարտված «Ամենապոեմը» թարգմանվում է Բրյուսովի կողմից։ Լավ են ցուցադրված այդ պոեմում հին Երևանի յուրահատուկ կոլորիտը,

Նաիրյան երկրի բնակիչների հատկանշական գծերը։ Պոեմը թե՛ ձևով, և թե՛ բովանդակությամբ նշանակալից նորարարություն էր հայկական պոեզիայում։ Ուղղված լինելով բուրժուական ազգայնականների դեմ, նա ներթափանցված է կենսախինդ-ռևոլյուցիոնների առույգ տրամադրությամբ և ինտերնացիոնալիստական աշխարհայացքով։ Բավական է հիշել, թե ինչ էր կատարվում բզկտված և արյունոտված Հայաստանում, որպեսզի պարզ դառնա պոետի խիզախությունը, որը արիաբար վճռել է ռևոլյուցիոն երգով ծաղրել անցյալի կույր ջատագովների ազգայնական պատրանքները։ Հայ քննադատական գրականության մեջ բազմիցս ընդգծվել են այս պոեմի եզրափակիչ տողերը.

«Ես ասում եմ՝ աշխարհը կդառնա
Մի հանո՜ւր խնդության փողոց,
Ու Չինկ-Ֆուն Պեկինում կխմե
Քո կենա՛ցը, Բարթո՛ւղ, Պողո՛ս...»։

Պոեմի լույս ընծայման օրից անցել է 35 տարի։ Այսօր Հայաստանի գործարաններում կարելի է տեսնել Չինաստանից եկած ինժեներների, իսկ Չինական Ժողովրդական ռեսպուբլիկայի նորակառույցներում՝ հայ ինժեներների։ Այդքան հեռու է ահա առաջ նետվել պատմությունը։

Չարենցի ստեղծած «Կապկաղ-թամաշա» կատակերգություն-բուֆոնադան, անկասկած, հին Անդրկովկասի տիրակալների սուր քննադատությունն է։ «Երկիր Նաիրի» վեպը ուղղված է ընդդեմ հնադույն անցյալի երգիչների և ազգայնականների։ Այս վեպը հայ էմիգրանտների կողմից ընդունվեց կատաղի զայրույթով։ Չարենցի ստեղծագործության մեջ կարելի է գտնել և՛ Գոգոլի, և՛ Գորկու, և՛ Մայակովսկու, և նույնիսկ Բրյուսովի ազդեցության հետքեր։ Բայց և այնպես, Չարենցը միշտ մնում էր ինքնատիպ դեղագետ, նա ձգտում էր ինքնուրույն կերպով, Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի լուսավոր պատգամներից ելնելով՝ լուսաբանել հարազատ իրականության խնդիրները։ Բացահայտորեն միակողմանի քննադատելով հին մշակույթի առանձին վարպետներին, Չարենցը դիտավորյալ ընդգծում է դասակարգային սուր բախումների օրերին ստեղծված կոպիտ ժարգոնը։ Նախառևոլյուցիոն Անդրկովկասի սև տիրակալներին խարազանող պլերեյների այդ յուրահատուկ «արգո»-ն լավ էր հաղորդում սուր պայքարի պատկերը։ Յուրահատուկ է նաև «Մաճկալ Սաքոյի պատմության» կենդանի ոճը։ Չարենցը ուրվագծել է հայ գյուղացու նոր կերպարը։ Լենինի մասին պատմությունն այս ստեղծագործության մեջ արտացոլում է Հոկտեմբերյան ռևոլյուցիայի էջերից մեկը։ Չարենցի մի շարք ստեղծագործությունների ուժը պայմանավորված է նրանով, որ բանաստեղծը եղել է ռևոլյուցիոն իրադարձությունների անմիջական մասնակիցը։ Օրինակ, երկաթուղային կայարանի գրավման տեսարանը «Մաճկալ Սաքոյի պատմության» մեջ Չարենցի կողմից տրված է լակոնիկ, բայց միաժամանակ շատ պատկերավոր։ Հետագայում, Փարիզում կոմունարների պատի մոտ վերհիշելով անցյալի հերոսական օրերը, նա կրկին վերադառնում է այս թեմային և նշում է կայարանի մոտի կախաղանները։

Բազմիցս պատկերելով ռևոլյուցիոն դեպքերի առանձին էջերը, Չարենցը կրկին և կրկին անդրադառնում է Լենինի կերպարին և տալիս է հայ գրականության մեջ չգերազանցված ցայտուն ու պատկերավոր ստեղծագործություն-

ներ։ Լենինի մասին Չարենցը խոսում է մի շարք երգ-պոեմներում։ 1924 թ. նա գրում է «Լենին», «Բալլադ Վլադիմիր Իլյիչի, մուժիկի և մի զույգ կոշիկի մասին», «Լենին քեռին», 1925 թվականին՝ «Լենինն ու Ալին», «Կոմունարների պատը Փարիզում», հետագայում նաև այլ ստեղծագործություններ։

«Լենինն ու Ալին» պոեմում Չարենցը միաժամանակ խարազանում է և՛ թուրք, և՛ հայ ազգայնականներին։ Լենինի կերպարն ստեղծելով, նա միշտ ընդգծում է նաև էպոխայի իրադարձությունները և ժողովրդի ու Լենինի ստեղծած պարտիայի միասնությունը։ Աչքի է ընկնում նրա ձգտումը՝ գտնել պարզ և հատու խոսքեր, մարքսիստական հայեցակետից լուսաբանելու Լենինի դերն ու նշանակությունը։

Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի ազդեցությունը նկատելի է նաև այն ստեղծագործություններում, որոնք թեպետ և անմիջականորեն չէին վերարտադրում իրական դեպքերը, սակայն հանդիսանում էին կենդանի արձագանքներ Հոկտեմբերյան ռևոլյուցիային, ռևոլյուցիայի լուսավոր պատգամներին։ Այդ գործերը նշանակալից փորձեր են ռևոլյուցիոն դիրքերից լուսաբանելու ժամանակի պրոբլեմներն ու իրադարձությունները։ Հայ գրողներից ոչ մեկն այնքան շատ բան չի արել և ոչ ոք չի կարող այնպես վստահորեն դասվել սոցիալիստական ռեալիզմի լույսով հագեցած գործեր ստեղծողների շարքում, ինչպես Չարենցը։

Նախառևոլյուցիոն Հայաստանի իշխողների ցայտուն բնութագրությունը տվող «Երկիր Նաիրի» վեպը, «Խմբապետ Շավարշ» պոեմը, ազգայնականության և ազգայնականներին խարազանող քննադատությունը, իր ընկեր, ռևոլյուցիոներ Սխչյանին նվիրված տխրությամբ համակված ինտիմ տողերը, ուղերձներն ու էլեգիաները ցույց են տալիս, որ Չարենցը ամուր և վստահ կանգնած էր սոցիալիզմ կառուցողների առաջին շարքերում։ Իր հայտնի «Թաղման քայլերգում» Չարենցը հավերժացնում է Կանտոնի չին ռևոլյուցիոների հիշատակը. «Բալլադ քսանվեցի մասին» պոեմում հիշում է հերոս կոմունարներին, մի այլ բալլադում ներկայացնում է անգլիական գեներալ Տոմսոնին և կերտում է կոմերիտականի կերպարը, իր երգերում և էլեգիաներում նկարագրում է ռևոլյուցիոն շարժումների հրաշունչ էջերը։ Ես այստեղ կանգ չեմ առնում Չարենցի հայտնի լենինգրադյան երգերի վրա։ Հարկավոր է նշել նաև, որ նա ուներ բեկման շրջաններում պոետի անելիքները ըմբռնելու ճիշտ զգացողություն։

Ռևոլյուցիոն գոտեմարտերի փոթորկալից օրերին նա կանգնած էր դասական մշակույթի դեմ հանդես եկող նորարարների շարքերում։ Բայց նա առաջինն էր, որ վճռեց կտրականորեն խզել կապերը իր այդ համախոհների, իսկ հետագայում նաև «ստանդարտ» արվեստի անփառունակ երկրպագուների հետ։ Քաջ հայտնի են նաև Չարենցի խոսքերը «Լեֆիստական թմրուկի» մասին։ Հաճախ դրանք խեղաթյուրված են մեկնաբանվում նույնիսկ այժմ։ Մեկնաբանները, դժբախտաբար, հաշվի չեն առնում այն, որ Չարենցը՝ էրուդիտ-դեղագետ լինելով, մեծ ուշադրությամբ ուսումնասիրում էր ընթացիկ տեսական դրականությունը։ Նրանք հաշվի չեն առնում այն, որ Չարենցն ինքը, իր աշխատանքով, իր կոնկրետ պրակտիկայով, իր ժողովածուների հրատարակությամբ, այդ գրքերի նյութերի ընտրությամբ, դեպի Պուշկինն ու Գորկին, Հովհաննես Թումանյանը, Ավետիք Իսահակյանն ու Վահան Տերյանը կատարած ավելի հստակ շրջադարձով ցույց տվեց անցյալի մշակույթի նկատմամբ ունեցած իր նոր, բազմերանգ մոտեցման նշանակությունը։ Նոր Չարենցի համար ժողովրդա-

կան բանաստեղծ Ավետիք Իսահակյանը դասական գրականության ցայտուն ներկայացուցիչն էր, հումանիստ-մտածողների մտորումների ու տրամադրությունների այն արտահայտիչներից, որոնք ժողովրդական մասսաներին անդուլ կերպով կոչ էին անում կռվի ելնել նեխված կարգերի ու հին աշխարհի դեմ։ Պատահական չէ, որ իր վերջին ժողովածուի մեջ Չարենցը, խարազանելով դաժան անցյալի մթին տիրակալներին և մեծարելով մայիսյան ապստամբության հերոսներին, այդ միևնույն գրքի երկրորդ մասում սիրով է հիշատակում դասական մշակույթի ներկայացուցիչներին և ընդգծում է հայ մշակույթի, հայոց լեզվի, հայ մանրանկարիչ-վարպետների արվեստի, միջնադարյան ազատախոհ պոետների դերն ու նշանակությունը։ Այս ամենը մեզ իրավունք են տալիս ընդգծելու Չարենցի բացառիկ դերը սովետահայ գրականության պատմության մեջ։

Այսուհանդերձ, սխալ կլիներ անտեսել սովետական այն գրողների պանծալի պլեադայի պատմական մեծ նշանակությունը, որոնք Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո ակտիվորեն արձագանքեցին Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի լուսավոր պատգամներին և խթան հանդիսացան հայրենի երկրում կուլտուրական շինարարության ինտենսիվ զարգացմանը։

Հնի քննադատությունը և պայքարը անցյալի տիրակալների դեմ, ժողովուրդների եղբայրության և բարեկամության գաղափարներն իրենց ուժգին արտահայտությունն են գտել Դերենիկ Դեմիրճյանի և Ստեփան Զորյանի, Ադամ Վշտունու և Նաիրի Զարյանի, Արազու և շատ ուրիշ տաղանդավոր գրողների երկերում։ Սովետահայ գրականության ծնունդն ու զարգացումն ընթանում էր ողջ սովետական գրականության զարգացման հետ սերտ միասնության մեջ, ժողովուրդների եղբայրության ու համագործակցության, խաղաղության ու սոցիալիզմի գրոշի ներքո։

Անհրաժեշտ է նշել նաև մի ուրիշ հանգամանք։ Ե՛վ հայ ժողովրդի ազատագրումը, և՛ Սովետական Հայաստանի նվաճումները, և հատկապես, Սովետական Միության հզորությունը հսկայական ազդեցություն ունեցան հայ ժողովրդական մասսաների վրա։ Նշանակալից է նաև այն, որ հայ մտավորականության ճնշող մասը, սովետական կարգերի հաստատման առաջին իսկ օրերից, ներգրավվեց նոր կուլտուրայի ստեղծման աշխատանքների մեջ։ Հայ դասական գրականության ամենանշանավոր ներկայացուցիչները ոչ միայն արձագանքեցին Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիային, այլև մտան ազատագրված Հայաստանի շինարարների շարքերը։ Բանաստեղծներ Հովհաննես Հովհաննիսյանը, Հովհաննես Թումանյանը, արձակագիրներ Շիրվանզադեն, Դերենիկ Դեմիրճյանը, Արազին, Ստեփան Զորյանը, ժողովրդական բանաստեղծ Ավետիք Իսահակյանը և գրականության շատ այլ ներկայացուցիչներ սովետական գրողների հաջորդ սերնդի հետ միասին սովետահայ գրականությունը դարձրին սովետական հզոր գրականության առաջավոր ջոկատներից մեկը։ Այն օրերին, երբ տեղի էր ունենում մեծ հումանիստ-գրողների՝ Պուշկինի, Արովյանի, Նիզամիի, Ռուսթավելու, Նավոյիի, Նեկրասովի հոբելյանների տոնակատարությունը, հայ գրողները արձագանքելով Գորկու պատգամներին, այլև իրենց նոր ստեղծագործական թարգմանություններով և անցյալի մեծ հումանիստների կերպարների նոր լուսաբանումով գրականության պրոպագանդայի գործը վերածեցին հանուն խաղաղության գործի և ժողովուրդների բարեկամության պայքարի զորավոր ազդակի։

Հայ առաջավոր գրողների ստեղծագործական աշխատանքի փորձը նպաստեց պոեզիայի և արձակի վարպետների նոր կադրերի աճին։ Հայրենական Մեծ պատերազմի տարիներին սովետական գրականության զարգացումը չընդհատվեց։ Հանուն արդար և սուրբ գործի պայքարողների շարքերում իրենց պատվավոր տեղը գրավեցին նաև հայ գրողները։

Ներկայումս սովետահայ գրականությունը մտել է իր զարգացման նոր, առավել պատասխանատու շրջանը, երբ գրողների առջև հարց է դրված գրականությունը բարձրացնել է՛լ ավելի բարձր մակարդակի, ավելի մոտ կանգնել կյանքին, ժողովրդին, ժամանակի ակտուալ հարցերին։ Կասկածից վեր է, որ չնայած որոշ թերություններին, սովետահայ գրողները նշանակալից աշխատանք են կատարել և ստեղծել են իսկական հումանիստական և ինտերնացիոնալ գաղափարներով տոգորված գործեր, որոնք ժողովրդական մասսաների կողմից շատ ջերմ արձագանք գտան։ Ես վախենում եմ, որ իմ զեկուցումը կարող է դառնալ հեղինակների ու գրքերի ընդարձակ ցանկ։ Միայն այդ պատճառով ես այստեղ չեմ նշում մեր բազմաթիվ տաղանդավոր ու շնորհալի բանաստեղծներին և արձակագիրներին։

Ոչ մի կասկած չկա, որ դրամատուրգները ևս շատ բան են արել դրամատուրգիայի մեջ սոցիալիստական ռեալիզմի գաղափարների մարմնավորման համար։ Սովետահայ գրականության պատմարանները իրենց քննական ակնարկներում նշելով դրամատուրգիայի դերը, կտրուկ կերպով առաջ են քաշել սովետահայ դրամատուրգիան ավելի մեծ բարձրության վրա դնելու հարցը։ Այդպիսի պահանջկոտությունը բացատրվում է անկասկած նրանով, որ թատրոնը հանդիսանում է ժողովրդական մասսաների դաստիարակման ամենազորեղ ազդակներից մեկը։ Ներկայումս Հայաստանում կան տասնյակից ավել թատրոններ։ Մայրաքաղաքի թատրոններից բացի մեծ թատրոններ կան Լենինականում և Կիրովականում։ Դա մեծ և նշանակալից ուժ է։ Սունդուկյանի, Շիրվանզադեի, Պարոնյանի, Դեմիրճյանի հայտնի պիեսներից բացի, հայկական թատրոններում դեռևս քսանական թվականներին ներկայացվել են Գոգոլի, Գորկու, Գոլդոնիի, Շեքսպիրի, Շիլլերի, Իբսենի և այլ նշանավոր վարպետների պիեսները։ Մամուլի արձագանքներից դատելով թատերական հանդիսատեսի կողմից մեծ ջերմությամբ են ընդունվել Տրենյովի, Լավրենյովի, Ֆուրմանովի, Վսևոլոդ Իվանովի և այլ հեղինակների ռևոլյուցիոն գործերը։

Հայկական մշակույթի պատմարանների համար, անշուշտ, մեծ հետաքրքրություն է ներկայացնում ռեժիսյորների ձեռնարկած աշխատանքը։ Ռեժիսյորների ստեղծագործական աշխատանքը մեծ բարձրության վրա դրվեց միայն սովետական իշխանության օրոք։

Դերասանների, հեղինակների, ռեժիսյորների կոլեկտիվ աշխատանքը լրացվում էր նկարիչների ստեղծագործական աշխատանքով։ Մեր թատերական քննադատները բազմիցս ցույց են տվել դերասանների ձգտումը՝ ընդգծել պիեսների գաղափարական էությունը, ռևոլյուցիոն ռոմանտիկայի հատկանշական կողմերը։ Հայկական թատրոնի բոլոր աշխատողների կողմից լայնորեն օգտագործվել է ռուս առաջադեմ վարպետների փորձը։

Թատրոնը մասսաներին մոտեցնելու նպատակով հաճախ նրա աշխատողները գնում էին շրջաններ։ Ավագագույն դերասաններից մեկը՝ Ամո Խարազյանը, տակավին 1925 թվականին կազմակերպեց «Ազատ կոլեկտիվ» խումբը, որը սպասարկում էր ինչպես բանվորական, այնպես էլ հեռավոր գյուղական

շրջանների հանդիսատեսին։ Ի դեպ այդ խումբը հետագայում դարձավ Հայաստանի պետական շրջիկ թատրոն։

Թատերասեր հանդիսատեսի աճի շնորհիվ ներկայումս թատրոնների նշանակությունն է՛լ ավելի է մեծացել։ Այժմ հայկական թատրոնները աշխատում են անհամեմատ ավելի բարենպաստ պայմաններում։ Այստեղից պարզ է, որ բեմադրությունների որակը բարձրացնելու նպատակով և՛ խաղացանկի, և՛ դերասանների խաղի առանձին թերությունների քննադատությունը պետք է առավել չափով ուժեղացվի։

Երկու խոսք մեր երաժշտության նվաճումների մասին։ Նախասովետական Հայաստանում, ինչպես հայտնի է, չկային կոնսերվատորիա, երաժշտական դպրոցներ։ Չկար նաև օպերայի և բալետի թատրոն։ Չկային, վերջապես, համերգային դահլիճներ։ Սովետական կարգերի հաստատման առաջին իսկ օրերից տեղի ունեցավ շեշտակի բեկում։ Ստեղծվեցին բոլոր նախապայմանները երաժշտության և արվեստի մյուս ճյուղերի բուռն զարգացման ու ծաղկման համար։ Խոշոր դեր խաղաց, անշուշտ, Ռիմսկի-Կորսակովի մերձավոր գաղափարակից, կլասիկական երաժշտության լավագույն տրադիցիաներով դաստիարակված կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանի Հայաստան գալը։ Նա դարձավ երիտասարդ երաժիշտների ուսուցիչն ու մտերիմ բարեկամը։ Կարճ ժամանակամիջոցում ընդլայնվեց երաժշտությունը գնահատողների շրջանակը։ Զգալիորեն աճեց հետաքրքրությունը դեպի դասական երաժշտությունը։ Ռոմանոս Մելիքյանի, Սպիրիդոն Մելիքյանի, Արմեն Տիգրանյանի, Արամ Խաչատրյանի, Տեր-Դևոնդյանի և մյուսների ստեղծագործությունները ազգային երաժշտության վերելքի նշանակալից ցուցանիշներ են։ Հայ մեծ երաժիշտ Կոմիտասի ստեղծագործությունների գիտական մանրակրկիտ ուսումնասիրությունը, նրանց ժողովրդականացումը չտեսնված լայն չափերով իրականացվեցին միայն սովետական իշխանության տարիներին։ Պետք է նշել նաև այն մեծ աշխատանքը, որ ձեռնարկվեց նշանավոր արևմտահայ կոմպոզիտոր Տիգրան Չուխաջյանի երաժշտական ժառանգության ուսումնասիրման գծով, որի ստեղծագործությունները համեմատաբար քիչ էին հայտնի։

Կերպարվեստի բնագավառում հայկական կուլտուրայի վերածնունդը ցայտուն կերպով դրսևորվեց ի դեմս գեղանկարչության նշանավոր վարպետ Մարտիրոս Սարյանի, որն իր մասնագիտական կրթությունը ստացել է Մոսկվայում և բարեկամական սերտ կապեր ունի ռուսական արվեստի առաջավոր ներկայացուցիչների հետ։ Նրա մի շարք աչքի ընկնող ստեղծագործություններում բացահայտված ու արտացոլված են ճնշումից ազատագրված ժողովրդական մասսաների և հենց իր՝ նկարչի կենսուրախ աշխարհայեցողությունը։ Սերը դեպի բնությունը, աշխատանքը և աշխատանքի մարդիկ ընդգծված է Սարյանի նկարներում և անգամ էտյուդներում, որոնք պատկերում են Հայրենի հովիտներն ու լեռնաշարքերը։

Բազմաթիվ գործերի ցայտուն գույներն ու արևային երանգները, առօրյա կյանքը պատկերող նկարների կենսուրախ ինտոնացիան, նույնիսկ փոքրիկ էտյուդների ընդհանուր կոլորիտը լավ են արտահայտում և՛ բնության, և՛ վերածնված Հայաստանի վեհությամբ արբեցած միշտ խոհուն, երազող-նկարչի մտահայեցողության հատկանշական գծերը։

Սարյանի հետ միասին հայ կերպարվեստի մեջ իրենց զգալի ավանդն են ներդրել նրա մոտիկ բարեկամներ-զինակիցներ՝ նկարիչներ Աղաջան-

յանը, Փ. Թերլեմեզյանը, Թադևոսյանը, Առաքելյանը, Գյուրջյանը, Կոջոյանը և շատ ուրիշ վարպետներ, որոնք ակտիվորեն արձագանքելով ազատագրված ժողովրդական մասսաների կոչին, իրենց աշխատանքներում պատկերեցին ռեալ իրականության մանրամասներն ու փաստերը։

Սովետահայ նկարիչների կողմից արտացոլված են և՛ աշխատանքային կյանքի առօրյան, և՛ էպիկական սխրանքների հերոսապատումը, և՛ երկրի սոցիալիստական վերափոխումն ու Հայաստանի ինդուստրացումը, և՛ աշխատանքի մարդկանց կերպարները։

Հայրենական Մեծ պատերազմի տարիներին գեղարվեստի վարպետների թե՛ ավագ, և թե՛ երիտասարդ սերնդի ներկայացուցիչները իրենց մի շարք արժեքավոր գործերում արտացոլեցին սովետական մարտիկների և աշխատանքային ճակատի մարդկանց հերոսական պայքարը։ Երիտասարդ վարպետների մի շարք ստեղծագործություններում ներկայացված են շարքային բանվոր-հերոսների, կոլտնտեսականների, ինժեներների, գիտության, արվեստի և գրականության ներկայացուցիչների դիմանկարները։ Բոլոր այս նոր աշխատանքները արժեքավոր պատմա-գեղարվեստական փաստաթղթեր են, որոնք արտացոլում են սովետական նոր մարդու կազմավորման բարդ պատկերը, երկրի վերափոխման պրոցեսի հատկանշական գծերը։ Նշված ստեղծագործությունները միաժամանակ ցույց են տալիս հայկական արվեստի երիտասարդ վարպետների աճը, վարպետներ, որոնք ռևոլյուցիոներ-հայրենասերներին հատուկ նրբազգացությամբ ուսումնասիրում են աշխատավորների կյանքը, աշխատանքն ու պայքարը։

Ավելորդ չէր լինի ավելացնել, որ առաջին Գեղարվեստի գպրոցը Հայաստանում կազմակերպվել է սովետական իշխանության օրոք, որ նախառևոլյուցիոն տարիներին Հայաստանում չկային թանգարաններ և երբեք չէին կազմակերպվում գեղարվեստի ցուցահանդեսներ։

Կերպարվեստի ստեղծագործությունների գիտական էքսպոզիցիան և ուսումնասիրությունը, հայկական արվեստի բաժին ստեղծելը՝ այս ամենը մայրաքաղաքի Կերպարվեստի թանգարանը դարձրին ռեսպուբլիկայի գիտա-գեղարվեստական կարևոր կենտրոններից մեկը։

Այսօր, սակայն, արվեստի քննադատները չեն կարող սահմանափակվել գեղարվեստական վավերագրերի սոսկ նկարագրությամբ։ Օրակարգի հարց է դարձված անցած ուղու մանրակրկիտ ուսումնասիրությունը և որակական ցուցանիշների օբյեկտիվ գնահատումը։ Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիան ոչ միայն խթանեց ազգային մշակույթի լուռն զարգացումը, այլև անհրաժեշտ դարձրեց ռևոլյուցիայի պատգամների պրոպագանդայի, մասսաներին ինտերնացիոնալիզմի և սոցիալիզմի ոգով դաստիարակելու հարցը։ Հայ արվեստի վարպետները մեծ աշխատանք են կատարել, բայց նրանք դեռ շատ անելիքներ ունեն, հատկապես այժմ, երբ արվեստի աշխատողների առաջ խնդիր է դրված ուժեղացնել կապը ժողովրդի հետ, պայքարել հանուն խաղաղության և ժողովուրդների եղբայրության, հանուն սոցիալիստական հասարակություն կառուցողների շարքերի ամրապնդման։

Անհրաժեշտ է երկու խոսք ասել նաև ճարտարապետության՝ սինթետիկ արվեստի ամենից ավելի կարևոր այդ տարատեսակի մասին։ Պետք է հաշվի առնել մի կարևոր հանգամանք։ Գրական և երաժշտական ստեղծագործությունները, թատերական ներկայացումները, անդամ քանդակագործների ու

նկարիչների աշխատանքները հնարավոր է ուղղել կամ վերափոխել։ Այդպես հեշտ չէ ճարտարապետական հուշարձանների սխալներն ուղղելը կամ ավարտված հուշարձանը քանդելը։ Այդ պատճառով էլ ճարտարապետության վարպետներին ներկայացվող պահանջները պետք է ավելի խիստ լինեն։ Հայկական ազգային ճարտարապետության դարավոր տրադիցիաները քաջ հայտնի են։ Այսուհանդերձ դրանք անցյալում մոռացության էին տրվել, նախառևոլյուցիոն տարիներին Հայաստանում ակնհայտ արհամարհանք էր տիրում հայ դասական ճարտարապետության նկատմամբ։ Հայտնի է, որ այդ ժամանակ երկրում չկար մտածված կամ պլանային շինարարություն։ Վճռական շրջադարձը սկսվեց միայն սովետական իշխանության հաստատումից հետո։ Պլանային քաղաքաշինությանը և ճարտարապետական հուշարձանների մտածված, գեղարվեստական ձևավորմանը հիմք դրվեց 1922 թ. սովետական ճարտարապետության ներկայացուցիչների ջանքերով։

Երևանի այդ ինտենսիվ շինարարության օրերին բացառիկ դեր խաղաց մեծատաղանդ ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը։ Ներկայումս ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ Թամանյանի նորարարական ստեղծագործական գործունեությունը առաջին օրերին պահպանողական շրջանների կողմից անբարյացակամորեն ընդունվեց։ Դաստիարակված լինելով դասական ճարտարապետության լավագույն տրադիցիաներով և հրաշալի կերպով ուսումնասիրելով ճարտարապետության նշանավոր վարպետների՝ Ալբերտիի և Պալլադիի, Դվարենգիի և Կամերոնի, Զախարովի և Բաժենովի, Վորոնիխինի և շատ ուրիշների ստեղծագործական ժառանգությունը և, վերջապես, լինելով Շչուսևի և Ցշուկոյի, Ֆոմինի և Ժոլտովսկու բարեկամն ու գործակիցը, Ալեքսանդր Թամանյանը համեմատաբար կարճ ժամանակամիջոցում հսկայական աշխատանք կատարեց Հայաստանում շինարարության մեջ պլանային սկզբունքը արմատավորելու, շենքերի գեղարվեստական որակը բարձրացնելու, նոր, ազգային և միաժամանակ սովետական ճարտարապետություն ստեղծելու ուղղությամբ։ Ալեքսանդր Թամանյանի, այդ լրջամիտ էրուդիտ-գեղագետի ստեղծագործական որոնումներն ու նվաճումները զգալի ազդեցություն ունեցան երիտասարդ կառուցողների արվեստագիտական հետաքրքրությունների աճի և հայ ճարտարապետների նոր սերնդի զարգացման վրա։ Պետք է ասել, որ այդ ճարտարապետների ջանքերով համեմատաբար կարճ ժամանակամիջոցում վերափոխվեց ոչ միայն ռեսպուբլիկայի մայրաքաղաքի, այլև մյուս քաղաքների և որոշ շրջանային կենտրոնների դեմքը։

Հայ ճարտարապետության ուսումնասիրման և ստեղծագործական յուրացման հետ միաժամանակ օգտագործվել են դասական ճարտարապետության համաշխարհային և ռուս վարպետների կարևորագույն նվաճումները։ Թամանյանի անմիջական նախաձեռնությամբ հատուկ ուշադրություն դարձվեց տեղական շինանյութերի հետազոտման աշխատանքներին, հայկական մարմարի, գրանիտի, բազալտի արժեքավոր տեսակների և հատկապես տուֆի տարատեսակների մշակմանը։ Նախառևոլյուցիոն Հայաստանում քաղաքները չափազանց մռայլ կոլորիտ ունեին, քանի որ գերակշռում էր սև տուֆը։ Բացի այդ քաղաքային շենքերի մեծ մասը, փողոցների անճաշակ ձևավորումը շատ ծանր տպավորություն էին թողնում։ Ոչ ոք չէր հետաքրքրվում փողոցների պլանավորված կառուցմամբ կամ շենքերի գեղարվեստական ձևավորմամբ։ Սովետական Հայաստանում գործը կտրականապես փոխվեց։ Խիստ մտածված պլանով կատարվող շինա-

բարությունը, մոնումենտալ շենքերի գեղարվեստական դասավորությունը, նրանց գունազարդումը, շինությունների համար ընտրվող վարդագույն և բաց մոխրագույն տուֆը բացահայտում և արտացոլում էին նոր սոցիալիստական Հայաստան կառուցողների կենսուրախ աշխարհայեցողությունը և ազատագրված երկրի աշխատողների ձգտումը դեպի կոմունիզմի նոր, լուսաշող հեռուները։ «Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և հայ կուլտուրայի ծաղկումը» թեման չի կարող բավարար չափով ճիշտ լուսաբանվել, առանց ուշադիր հաշվի առնելու սովետահայ ճարտարապետության վարպետների նշանակալից նվաճումները, ճարտարապետներ՝ որոնք միայն սովետական իշխանության օրոք հնարավորություն ստացան ստեղծելու մոնումենտալ շենքեր և մեծ բարձրության վրա դնելու ճարտարապետության զարգացումը։

Այստեղ ես հնարավորություն չունեմ նշել Թամանյանի արժեքավոր նախաձեռնության շարունակողների զգալի կոնտինգենտի անուններն ու գործերը։ Այդ պետք է արվի սովետահայ ճարտարապետության անցած ուղիների մանրամասն բնութագրման մեջ։ Քննադատությունն, անկասկած, կարող է և պետք է բացահայտի այն գիզգագներն ու հակասությունները, ավելորդ մանրամասներով կամ զարդարանքներով տարվելը, նկատելի վրիպումներն ու թերությունները, որոնք կան հայկական նոր ճարտարապետության այս կամ այն վարպետի գործերում։ Սակայն ամենապահանջկոտ և խիստ քննադատությունն անգամ անկարող է չընդունել նոր ճարտարապետության անվիճելի և ակնհայտ նվաճումները, հայկական նոր ճարտարապետության կարևոր պատմական արժեքը։ Նա, ով առիթ է ունեցել մոտիկից ծանոթ լինելու նախառևոլյուցիոն Հայաստանի իրական պատկերին, տեսնելու անսահման տրտմություն ներշնչող նախառևոլյուցիոն շինությունները, անկանոն կերպով ցրված շենքերի ու անճաշակ շինվածքների խառնակույտը և, վերջապես, սև տուֆի գերակշռությամբ ընդգծվող մռայլ կոլորիտը, չի կարող չխոստովանել, որ հայկական նոր ճարտարապետությունը, որը կյանքի է կոչվել սովետական կարգերի հաստատումից հետո, հանդիսանում է միանգամայն նոր և ցայտուն վավերագիր։ Այդ ճարտարապետությունը նշանավորում է անցումը հնից՝ նորին, հայ ազգային կուլտուրայի այգարացն ու ծաղկումը, այն կուլտուրայի, որը փառաբանում է աշխատանքը, խաղաղությունը և ժողովուրդների եղբայրությունը։

Սովետական իշխանության տարիներին հսկայական նվաճումներ են ձեռք բերվել նաև կուլտուրական շինարարության, գիտության, կրթական գործի ծավալման և այլ բնագավառներում։

Բարձրագույն ուսումնական հաստատությունների, տեխնիկումների, միջնակարգ դպրոցների լայն ցանցի շնորհիվ ստեղծվել է օրըստօրե աճող նոր մտավորականություն։ Միայն ուսանողների թիվը ռեսպուբլիկայում ներկայումս 20 հազարից ավելի է։ Բացի Պետական համալսարանից, նորանոր կուլտուրական կադրեր են ստեղծում Պոլիտեխնիկական, Անասնաբուժական, Գյուղատնտեսական, Բժշկական և այլ ինստիտուտները։ Բազմանում, աճում, ուժեղանում է այն մասնագետների թիվը, որոնք իրենց տոկուն աշխատանքով նպաստում են սոցիալիստական տնտեսության և կուլտուրայի բարգավաճմանը։ Բացի բազմաթիվ գիտա-հետազոտական ինստիտուտներից, շատ մեծ դեր է կատարում Սովետական Հայաստանում ռեսպուբլիկայի ղեկավար գիտական օրգանը՝ Գիտությունների ակադեմիան, որի բազմաթիվ հաստատությունները սերտորեն կապված են արտադրության հետ և ակտիվորեն օժանդակում են հայրենիքի

տնտեսական ու կուլտուրական շինարարությանը։ Գիտությունների ակադեմիան իր պատասխանատու աշխատանքը վարում է ականավոր գիտնական, ակադեմիկոս Վ. Համբարձումյանի ղեկավարությամբ։

Սովետական իշխանության տարիներին բարձր զարգացման հասավ հայագիտությունը։ Այդ բնագավառում խոշոր ներդրում կատարեցին ականավոր հայագետներ Մ. Արեղյանը, Հր. Աճառյանը, Ստ. Մալխասյանը, Հ. Մանանդյանը, Գր. Ղափանցյանը, Հ. Օրբելին և ուրիշները։

Օգտագործելով դարերի ընթացքում կուտակված գիտական արժեքները, հենվելով մարքսիզմ-լենինիզմի դրույթների վրա, Հայաստանի Գիտությունների ակադեմիայի և գիտական մյուս հաստատությունների ներկայացուցիչները եռանդով ու տոկունությամբ են վարում իրենց աշխատանքը՝ մշտապես կապված եղբայրական ռեսպուբլիկաների գիտնականների և առանձնապես Սովետական Միության Գիտությունների ակադեմիայի հետ։

Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի առաջին օրերից արդեն հայ ժողովրդի ռևոլյուցիոն շարքերի համար ուղենիշ են եղել լենինյան այն լուսավոր պատգամները, որոնք կիրառվել ու իրագործվել են Սովետական Հայաստանի սոցիալիստական շինարարության ընթացքում։

Անհրաժեշտ է նկատել, որ Սովետական Հայաստանի տնտեսական և կուլտուրական վիթխարի նվաճումները մեծ բերկրանք են առաջացնում ամբողջ աշխարհի հայության մեջ։ Արտասահմանի հայ հասարակայնության դեմոկրատական և առաջադեմ բոլոր խավերն այսօր Սովետական Հայաստանը միանդամայն անկեղծորեն համարում են բոլոր հայ աշխատավորական մասսաների, ամբողջ հայ ժողովրդի իսկական հայրենիքը։

Գուցե անտեղի չէր լինի բերել նաև մի քանի հանրահայտ փաստական տեղեկություններ մեր երկրի տնտեսական վերելքի վերաբերյալ։

Փաստերից ամենակարևորն այն է, որ Հայաստանը սովետական կարգերի առաջին օրերին գտնվում էր շատ ծանր պայմաններում։ Երկիրն ավերված էր։ Քայքայված էր գյուղական տնտեսությունը։ Չկար արդյունաբերություն։ Չկային կառուցողների անհրաժեշտ կադրեր։ Դժվարին այդ պայմաններում է կատարվել այն ամենը, ինչ ստեղծված է այսօր։ Երկու կարծիք չի կարող լինել այն մասին, որ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի շնորհիվ ազատագրված ու վերածնված հայ ժողովրդի արտասովոր նվաճումները չէին կարող լինել, եթե հայ ժողովրդի կողքին կանգնած չլինեին ռուս ժողովուրդը և մեր հզոր Սովետական Միության եղբայրական ժողովուրդները։

Կոմունիստական պարտիայի ղեկավարության շնորհիվ հայ ժողովուրդը կարողացել է իր ավերված հայրենիքը դարձնել դեպի կոմունիզմի լուսավոր ուղիները քայլող խոշոր ինդուստրիալ երկիր, օրըստօրե բարգավաճող կուլտուրայի կենդանի մի անդաստան։

Հին Երևանում կային միայն գինու և կոնյակի գործարան, աննշան արհեստանոցներ, տխրահռչակ «դարաղխանաներ»։ Հին Երևանը «մայրագյուղ էր» քայքայման հուսահատ օրեր ապրող այն բնակչության համար, որը միմիայն «արցունքի հովիտներ» էր տեսնում հայրենի երկրում։

Այսօրվա Երևանը արդյունաբերական մեծ քաղաք է՝ լեցուն բարձրագույն գիտական հաստատություններով, դպրոցների խիտ ցանցով, ճարտարապետական հուշարձաններով, հսկայական գործարաններով։ Շնորհիվ նորանոր

խոշոր հանքավայրերի հայտնաբերման բարձրացել է Հայաստանի գունավոր մետալուրգիայի արդյունաբերության հանքահումքային բազան։ Շահագործման են հանձնվել նորանոր հանքավայրեր։ Հսկայական վերելք է ապրում Հայաստանի էներգետիկան։

Խոշոր հաջողություններ ունենք գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում։ Կոլեկտիվ տնտեսությունների և սովխոզների դաշտերում աշխատում են հազարավոր կոմբայններ, տրակտորներ և այլ ժամանակակից մեքենաներ։ Նշանակալից են նվաճումները նաև իրիգացիոն շինարարության, գյուղատնտեսական կուլտուրաների ցանքատարածության ընդլայնման, առանձնապես խաղողի և պտղատու այգիների պարզացման և բերքատվության բարձրացման ուղղությամբ։

Սովետական իշխանության տարիներին Հայաստանի ամենախոշոր երկու քաղաքները արտասովոր կերպով մեծացել ու վերափոխվել են։ Հին Երևանի ընդամենը մի քանի տասնյակ հազար բնակչությունը այսօր հասել է մոտավորապես 450 հազարի։ Հիմնովին փոխվել է հին Գյումրի-Ալեքսանդրի «դեմքը»։ Ստեղծվել են 12 նոր քաղաքներ և 23 քաղաքատիպ ավաններ։ Սովետական կառավարությունը հնարավորություն ստեղծեց 90 հազարի չափ հայրենադարձների հաստատվել Սովետական Հայաստանում։ Սովետական Միության կողմից ցույց տրված օգնության շնորհիվ այդ նոր բնակչության համար ստեղծվել են լավագույն պայմաններ՝ հատկացվել են անհրաժեշտ հողամասեր և շենքեր, կառուցվել են դպրոցներ, ջրմուղներ, հիվանդանոցներ։

Սովետական Հայաստանի տնտեսական վիթխարի հաջողություններին զուգընթաց փարթամորեն աճեցին Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի շնորհիվ ազատագրված ու վերածնված Հայաստանի գիտությունը, գրականությունը, արվեստը, ճարտարապետությունը և ողջ կուլտուրան։

ВЕЛИКАЯ ОКТЯБРЬСКАЯ СОЦИАЛИСТИЧЕСКАЯ РЕВОЛЮЦИЯ И РАСЦВЕТ АРМЯНСКОЙ КУЛЬТУРЫ

Арт. КАРИНЯН

(Резюме)

Победа Великой Октябрьской социалистической революции нашла горячий отклик среди трудящихся и передовых слоев интеллигенции Армении. В начале статьи дается характеристика творчества крупнейших армянских писателей и поэтов — Акопа Акопяна, Ваана Теряна и Егише Чаренца, которые отобразили в своих произведениях отношение армянского народа к великим революционным событиям России. Октябрьская революция создала все условия для мощного развития и расцвета национальной культуры. Армянская литература стала одним из передовых отрядов советской литературы. Огромны достижения и в области науки. Больших успехов добились также мастера музыки, живописи и архитектуры.